

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ ԿՆՈՐ ՕՐԻՒ

ՆԱՄԱ ԿԱՐ ՈՅԷ ԲՂԹԱՅՈՒԹՅՈՒՆ  
ՊԵՏԲ Է ՈՒՂՂԵՒ ԱՌ  
Վարչութիւնն ՆՈՐ ՕՐ Երազի  
ԳՈՂԻՐԷ

Direction du journal  
NOR-OR  
Caire

Ձեռագիրներն եւ չեն գործարկ  
ԱՐՏՕՆԱՏԷՐ Ժ. ՄԻՒՆԻԷ

# ՆՈՐՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՐԱՅՈՒՆՆԵՐԻ ՎՈՐՈՒԹԻՒՆ

Լ Գ Ի Պ Տ Ո Ս	
ԳՐԵ. ՈՂՁ	
Գանձար սարեկան	50
Վեցամետայ	30
Շրջակայից սարեկան	60
Վեցամետայ	35
ԱՐՏՕՆԱՏԱՆԻ ՉԱՄԱՐ	
Տարեկան	Յրոնց 18
Վեցամետայ	11
ԹՈՒՍՈՑ ԵՒ ԿՈՎԱՍՍԻ ՉԱՄԱՐ	
Տարեկան	Բուրի 7
Վեցամետայ	4
ԲԱՅՈՒՆՆԵՐԻ ՎՈՐՈՒԹՅՈՒՆ	
ԵՒ ԲՂԹԱՅՈՒՆ ՄԱՒԵՐ	
Թեքից վարչութեան վրայ է	

ՇԱՐԱԹ ՄԱՅԻՍ 19/1 ՅՈՒՆԻՍ 1901

ՔԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 93

## ՊԱՏԵՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Պ. Յովսեփեան կը ծանուցանէ յարգելի հասարակութեան, որ մտերս իւր Եղիպտոսէ բարձրովն սկսեալուն առթիւ, իւր Պապ-Էլ-Հասիտ փողոցին, Նուպար փառային տան մօտերը գտնուող (Aux articles des voyageurs) վաճառատանց բովանդակ ապրանքները խիստ աժան գիներով ծախու գրուած է (liquidation)։ Կաշիայ անգ. սնտուկներ պայուսակներ, ծածկոցներ, զլխարկներ, գուլպաներ, շապիկներ, աթոռներ ճամբու, կանանց թուայէթի պայուսակներ են. նն. որոնք գրեթէ կէս գնով պիտի ծախուին։

Կը գտնուի նաև դերձակի և կօշկակարի ընտիր մեքենաներ խիստ աժան գիներով։

Սոյն լաւ կահաւորեալ վաճառատանը թէ ծախու է և թէ վարձու։

## ԱԶԳ

Կը խնդրուի մեր արգոյ բաժանորդներէն որ անյուսակ իրենց յետեալ բաժանորդագրիները փութան վճարել նկատելով որ «Նոր Օր» տարեշրջանը կը լրանայ վաղը Յունիս 2ին։

## ՉԻՆ

Պ. Ժորժ Լէնչ հետեալ թղթակցութիւնը ուղղած է Չինն որուն մէջ կը նկարագրէ, Եւրոպական զօրքերու Չինացոց նկատմամբ գործած անգթութիւնները սպակո։

Թունկ-Չէուի գրաման հետեալ օրը քաղաքին պարիսպին երկայնքը ճանապարհին վրայ ձիով պտոյտ մը կ'ընէի. ճանապարհին մէկ կողմը գտնուած տուններէն ոտնալու ձայներ կը լսուէին աղիտղոթմ ճիչերու խառնուած։ Ուղղուեցայ դէպի ապառաժին ստորտը և տեսայ որ երկու շինացի աղջիկներ գետին փռուած կը հէծէին. իրենց ծունգուրներուն ու սրունգներուն կերպարանքն կը հակըցուէր թէ բարձր տեղէ մը ինքզինքնին վար նետած են։ Իրենց բանթալոնին, հագուելու եղանակին, կօշիկներուն նայելով «օրիորդներ» պիտի ըլլային ստունք, որոնցմէ մին գրեթէ իր հոգին աւանդելու մօտ էր։

Այս տեսարանը եղական ու տիպարան տեսարան մընէր սոսկումի ու վայրագութեան։

Թունկ-Չէուի ուրիշ թաղերուն մէջ, Բէքինի մէջ իսկ այսպիսի տեսարաններու ակնատես եղայ. Տարօրինակ բան մը չէր հանդիպել փողոցներուն մէջ, քայլ գլուխ կիներու, աղջիկներու, ընտանիքներու որք կը հեծէին իրենց ցնցատիներուն մէջ ու մտնէր փղձկամահ եղած իսկ ոմանք ինքզինքնին գերաններէն կախած։

Կարելի չէր ճամբան անցնել առանց պատահելու անթիւ կառքերու որոնք շարունակ մանկամարդ կիներու և աղջիկներու դիակները կը փոխադրէին գէպի ծով։

Մնձնասպաններու դիակներ էին առտունք։ Թունկ-Չէուի մօտ քանի բանի անդամ պատահած եմ աղջիկներու որ գլուխին ծովուն յատակը խոթելով ինքզինքնին կը ձգէին այնպէս մինչև որ խեղդամահ ըլլան։ Բոլոր այս տեսարանները արդիւնք չեն մ'իթէ մեր դաշնակից զօրաց ինքնակող քաղաքակրթութեան։

Բառ-Թինկ-Չուի մօտ ճամբու մը վրայ Ֆրանսացի զօրքերը երևը աղլըկոնց դիակները հանեցին հօրի մը մէջէն ուր նետած էին գերմանացիները իրենց մեկնելէն առաջ։

Նարոյժոնի և կամ Աթիլայի բարբարոններէն ի վեր, ժամանակը այսպիսի տեսարաններու ակնատես եղած չէր դեռ։

Պ. Ժորժ Լինչ կ'առաջարկէ յուշարձան մը կանգնել ի յիշատակ մահուան Գերմանական զեսպան Պ. Գէթէ-Լէրի զոր սպաննեցին Պօլսէրները։ Կը յանձնարարէ նաև չի մոռնալ ուրիշ յուշարձան մը կանգնելու ի յիշատակ այն հազարաւոր չինացի կանանց և աղջկանց որոնք նախամեծար համարեցին մեռնել քան թէ անարգուի ու իրենց պատիւը բռնաբարել տալ. Եւրոպայի զօրքերուն։

## ՀԱՅ ԼԵՂՈՒԻ ԴԻՐՔՆ

Մինչև անցեալ դարու սկիզբները այնպէս կը կարծուէր թէ Հայ լեզուն բարձրովն անկախ լեզու մ'է որ ո և է կապակցութիւն և յարաբերութիւն չունի օտար լեզուներու

հետ։ Հայ լեզուի բաղադրական ուսումնասիրութիւնը առաջին ըլլալով խրճող նիւթ եղաւ Գերմանիոյ մէջ, ուր Բրոֆ-Բէթերման իր Լատին լեզուա գրած Հայերէնի բերականութեան մէջ ցոյց տուաւ թէ Հայերէն լեզուն որպէս բանորով այնպէս և բերականութեամբ Հնդկարական մեծ ճիւղին կը վերաբերի։

Բրոֆ-Բէթերմանի հետեւելով ուրիշ օտար արեւելագետներ ինչպէս Միլլեր, Հիւպման և Հայոցս մէջ Գ. Պատիանեան, Մ. Էմին, Հ. Ս. Տէրփիլիան և սիսան հետազոտութիւններ ընել, ասոնցմէ ոմանք Հայերէնի դիրքը Հնդկարական լեզուաց շարքին մէջ ճշտելու կարծիքը բնորոշեցան, սմանք ալ Հայերէն լեզուն զանցին իրանեան խմբին մէջ, իսկ ուրիշներ ալ Եւրոպական լեզուաց Սլաւո-Լեռական ճիւղին մէջ։ Ինչպէս անունէն յայտնի է իրանեան կը կոչուին այն ժողովուրդները որ կ'ապրին Հին Պարսկաստանի հողին վրայ, և այդ Պարսից հետ նոյն ծագումն ունին, ասոնց լեզուները Հնդկ լեզուաց հետ ազգակից են, բայց ունին առանձին յատկութիւններ և կը կազմեն առանձին խումբ մը։ Այս խմբին կը վերաբերին հին Բակլիթերէնը, հին, միջին և նոր Պարսկերէնը, Աֆղաներէնը և Օսերէնը։ Իսկ Եւրոպական լեզուաց Սլաւո-Լեռական ճիւղին՝ զոր ոմանք կը բաժնեն երկու առանձին ճիւղերու, կը վերաբերին Լիթուաներէնը որ Արիական կենդանի լեզուաց մեջ ամենէն աւելի բնատուրին կը մտնայ, Լետերէնը, հին և նոր Պոլիկարերէնը, Ռուսերէնը, Լեհերէնը և այլն։

Հայերէնը թէև բարձր հնչական արտաքին նմանութեամբ և բերականութեան մէկ մասամբ իրանականին՝ կամ Գերմանականին վերաբերի կը թուի, բայց ներքին կազմութեամբ, առանձին յատկութեամբ և բերականական յատուկ ձևերով այս երկու ճիւղերէն և ոչ միայն հետ կատարեալ նմանութիւն ունի։

Հայք իւրեանց երկարատե պատմական շրջանին մէջ զանազան զրացի ազգաց, գլխաւորապէս Պարսից ազդեցութեան ենթարկուած են. այդ ազդեցութեան տակ օտար լեզուներէ, ի մասնաւոր Պարսկերէնէ այնքան բառեր և դարձուսներ ընդունեցին, որ բարձրովն այլափոխելին իրենց հին լեզուն։ Արդ այդ օտարամուտ մասունքն զրահով կը գտնուէր որ գրական Հայերէն լեզուն կազմուած է երեք գլխաւոր մասերէ, Հայկական, Պահլաւական և Սասանական կամ Պարսկական, ի սոցանէ Պահլաւական և Սասանական մասանց իրանեան ծագումն ակնյատնի է. բայց բուն հին Հայկական լեզուն աւելի կը վերաբերի լեզ-

ուայ այն ընտանիքին՝ որոյ ամենահին ներկայացուցիչն է Չինտերէնը։

Հայ լեզուի բաղադրական ուսումնասիրութեան ծամանակ պէտք է ի բաց թողուլ այդ օտարամուտ մասունքը, և մնացեալ բուն Հայկական մասերը քննելով որոշել Հայերէնի դիրքն. այդ հին Հայկական անխառն լեզուն իրանեան չէ, բայց թէ ո՞ր պէտք է գտնել զայն գիտար և հաստատութեամբ բաշխել, զի ինչպէս որ այդ հին լեզուն իր նախկին յատկանիշներն՝ նոյնպէս և բերականութիւնն իր նախկին սահմանները կորուսած է։ Մասնաւորապէս գիտար է այն երբ անձանթ են կարգ մը Պարսկական հին լեզուները որ գիր և պարսկերէն չեն ունեցած և երկրորդ՝ երբ մասնաւոր օտարագրի լեզուաբանք իւրեանց ուսումնասիրութեան հիմնուած են միայն գրական Հայերէնը, մինչդեռ կային և կան գեղաբան Հայ բարբառք որ թէ բանորով և թէ բերականութեամբ իրարմէ շատ տարբեր են։

Այսու հանդերձ ցարդ եղած խուզարկութեանց իրը ճշմարիտ արդիւնք կարելի է ըստել թէ Հայկական լեզուն մէկ կողմանէ իրանեան և Գերմանական, իսկ միւս կողմանէ Սլաւո-Լեռական ճիւղերու մեջտեղը կը գրտնուի, և Հնդկարական լեզուաց անյայտացած խոր մը ներկայացուցիչն է։ Եթէ կարելի լինէր վերականգնել Փոսիական, Լիւրական և այլ փոքր Ասիոյ կորուսեալ լեզուները, սոցա հետ կրնար զատ խումբ մը կազմուել և ազգու օղակ մ'էս յաւելուլ այն շրջանային, որ Հնդկաստանի լեզուներն կը միացնեն Եւրոպայի լեզուաց հետ։

Ինչպէս Հայերէնը, Եւրոպական լեզուաց մեծ մասն ալ փոքր-Ասիոյ, Պարսկաստանի և հիւսիսային Հնդկաստանի լեզուաց հետ խոր նմանութիւն ունի։ Արիւ-Եւրոպական բնականութիւն կազմութիւնը վերջնականապէս լուծեալ խնդիր մ'է այսօր։

Հաստատուած է որ այսօր կորուսեալ բայց գիտնականապէս վերականգնեալ մայր լեզուէ մը յառաջ եկածն անուսան լեզու եօթն ճիւղեր որոնք բոլոր կարգին ծնունդ տուած են Հնդկարական բարբառաց։ Այդ մայր լեզուն նախկին Արիական անունը կը կրէ։

Հետեւելով Արեւից յԱրեւմտա աշխարհագրական կարգին, որ է միանգամայն և նոցա կազմական բարեփոխութեանց կարգն, այդ ճիւղերն են Հնդկ, Իրանական, Յունական, Լասիական, Կեղսական, Կերմանական, Լիւրական և Սլաւական։

Լ.

ՆԵՂՈՍԻ ՅՈՐԳՈՒՄԸ

Յանի է թէ Նեղոս գետը Եգիպտոսի համար այնքան յարգի ընծայողն՝ անոր որդեգրանց ժամանակաւոր և կանոնաւոր շքր- ջանն է, որք ամէն տարի 736 աշխարհա- գրական բառակուսի մղանի տարածութեամբ երկիրը կ'ստգաննեն, պարարտացուցիչ կա- մը թողով հոն: Հիստորիան հոգմունք, որք սովորաբար կը փչին Մարտէն միշտ և Սկա- տեմբեր, Միջերկրականէն հասարակ ջրոյ շտփններն մղելով վեպի Եթովպիոյ լեռներն ուր առատահոս անձրևի կը փոխուին, այս- պէս պատճառ կը լինին Նեղոսի անմահ, որոյ առաւել ևս կը նպաստեն միանգամայն ծովուն այրին վեպի գետոյն բերանին յիսս հոսեցնելով:

Հնագոյն ժամանակաց հետև, Եգիպտոս- ցիք մտածած են սպողման յառաջացումը չափել և աւազանաց ու ջրանցից միջոցաւ ջրանցած են աւելի հասարակաւ լաշ- խել ջուրերն, ինչպէս նաև գիւրացնել անոնց ամբիփունն: Մերիս լիծն կը ծառայէր իբր ընկունարան յորման աւելորդաց, նոյնպէս գետոյն անունն աւելցնելով՝ անրաւական ե- գած ասան: Ահագին թուրքեր շինուած են Տէլպայի շուրջ՝ գետոյն ընթացքը կանոնա- տրելու համար:

Հնուորդ մզկիթի մը մէջ, Հին Գահիրէի, մտերը բառակուսի ընդարձակ հորի մը մէջ կրանիթեայ սին մը կայ ութանկիւնի ձևով, քիչքնեղութեամբ, որ կը կոչու- ուի Նեղոսայտի: Սոյն աստիճանաւոր սինը կը ծառայէր գետերուն ջուրի անու- մը և նուազումը չափելու:

ՊՈՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇՏՅԻ ԳՈՐԾԻՔԸ

Նոր-Դարի մէջ կը կարդանք հե- տեւեալը .

Մեր հին երկրագործներն ասում են, թէ քանի տարեան շատ ման ածէք ցանած արտի վրայ, այնքան ալ հողի բերրութիւնը կաւելնայ: Պէտք է ենթադրել, որ այդ կար- ծիքը որոշ չափով հիմք ունի՝ քանի հողը լաւ խոտուի, քանի մանրանայ, այնքանալ մատչելի կը դառնայ օդի ներգործութեան: Յայտնի երկրագետ ըմբիկոս Դեգերէնը բա- ցատրում է, որ եթէ հողը լաւ մշակուէր, այն ժամանակ հարկաւոր չէր լինիլ նորա մէջ ոչ օրգանական աղտոյնի նիւթեր նիտրատ- ներ խոտեր, որովհետև, ասում է նա, եթէ հողը լաւ փորեն, լաւ մանրացնեն, այն ժա- մանակ օդն ազատ մուտք ունենալով նրա մէջ, այդ տեղ անտարբեր միաւորութեամբ մնացած աչառը կարող էր թթուածինի ներ- գործութիւնից բոյսի համար գիրաւ իրա- ցնելի մտնող գառաւ:

Ահա այդ նպատակն ունի Պօղոս Նո- սար փաշայի հնարած արօրը, որը ոչ մի- այն խորը փորում է հողը, այլ և խիստ մանրացնում: Դա մի երկրորդաշար կառք է սովորական անիւներով, այդ կտորի առջևի կողմից կրում է երեք ս ըրի անիւ: Այդ անիւները շարժում են ոչ թէ կառքի ուղ- դութեամբ, հասկա լայնքի ուղղութեամբ. այ- սինքն՝ մինչ կառքի սովորական անիւնը գործում են ասով ասնելով կառքը, յիշեալ երեք մեծ անիւները պտտուելով վեպի ալ կամ ձախ՝ փորում են հողը, և որովհետև այդ անիւների շարքը ընդ միայն արած են բազմաթիւ ձեռնաման (արօրմասը) դա- նակներ, ուստի եւս դրանք փշրում, մանրա- ցնում են հողը:

Այս կառքը շարժում է երկրորդականու- թեամբ. բայց կարող է դործել նաև շոգե- շարժով կամ գաղաշարժով և այլն:

ԾԱՐԱՆ ԶԱԳԵՅՆԵՆՈՒ ԵՂԱՆԱԿՆ

Իժեկի մը յուշատետքի կողմում

Ամառուան եղանակին՝ պատեհ սուրճ մըն է հետեւեալ յօդուածը յանձնարարել ընթերցողներուն աչա- գրութեան:

Մեծագոյն մասն այն հիւանդութեանց, որոնց եթակայ է մարդը ամառային տաքե- րու միջոցին, յառաջ կուգայ զովարար ըմ- պելեանց չարաչար գործածութեան: Ոմանք չափազանց կը լսեն, այլք՝ ոչ ըստ բաւակա- նին. ուստի ուսել գիտնալու չափ լսել սոր- վին ևս օգտակար է:

Վնասակար է ըմպելն, երբ խիստ տաք- ցած ենք, ծարաւը կը յագնայ շատ խը- մելով, թէ ոչ ընդհանրապէս տառել ևս կը գրգռի. ինչպէս պէտք է լսել չափաւորելու համար կոկորդին ցամաքութեան յառաջ եկած տապն:

Սովորաբար, կ'արգիեն լսելն երբ մար- մինն կասարեալ արտաշնչութեան մէջ է, և կը վախճուի թէ քրտաթոր մարմնայ մէջ պաղ ըմպելեանց ներմուծումն յառաջ կը բե- րէ ցրտառութիւն, կողացաւ քլեպտիկ կըր- ծոց այտուռն ըլլալով:

Երբ շատ տաքցած միջոցին պաղ ջուր լսելն, ահա թէ ինչ տեղի կ'ունենայ մեր կազմութեան մէջ. ներս թափանցող պա- դութիւնը աղիքներէն կը մղէ արեւնը վեպի մերթոյն մակերևոյթին ջերմութիւնը կը սփռի շուրջանակի և արտաշնչումը համեմա- տաբար կ'արագանայ:

Եթէ ներմուծեալ քանակութիւնը մեծ չէ, արեւնը՝ վեպի մարմն հոսելէ յետոյ, կը վե- բազանայ ի ներքս, և արեան այս կրկին շարժումն ըստ ինքեան անկաւա է. բայց ա- հա ուր է վտանգը:

Մարդոյ իսկական բարեխանութիւնը զը- րեթէ միշտ նոյնն է. տաքութեան առաւե- լութիւնն՝ որ ամբան եղանակին կը բարձ- րացնէ նորա աստիճանն, քրտանց ցոյցման պատճառաւ ջերմութեան գարշոյի նուա- զումէն կը չափուի: Ամէն ոք փորձած է թէ փոքր ինչ գինոյ ոգի (սոլոջոյ), Կոյրնէի Ջուր (օսթ գոլոնէր) կամ Եթիւր կա- թիցնելով ձեռաց մէջ, խիւղն զովութիւն մը կը զգայ, որ յառաջ կուգայ ամէն հեղուկ շոգանալու համար վինք շրջապատող մար- միններէն ջերմութիւնն անտելն. քրտինքն ևս ենթակայ է սոյն կանոնին:

Եթէ քրտան շատինք օդը հոսանքի մը մէջ, քրտանց շոգիացումն այլ ևս ջրային վը- րութեան աղիցցութեան տակ չլինի. օդը պէտք եղածն աւելի մեծ քանակութեամբ կը շոգեացնէ քրտինքն, և անկանոն ցրտութիւն մը վրայ կը հասնի: Արտաշնչութեան, այ- սինքն մարմնոյ մակերևոյթին դոտուած ջրոյ քանակութեան համեմատ արդիւնքն ալ այն- քան առաւել զգալի կը լինի: Արդ, երբ քըր- անած լսելնք ջուրը մեծաքանակ խոյս տայ մարմնէն, ցրտառութիւնը միշտ պատրաստ է, եթէ հարկ եղած զգուշութիւնը չլինի:

Ներմուծեալ ջուրը չէ որ վտանգաւոր է, այլ լսելն վերջը մարմնոյն օգային հո- տանքին ենթակայ ըլլալն է. յայտնի է թէ ամէն վտանգ կ'անհետի, եթէ փոխանակ անշարժ կենալու շարունակեալ ըստ յայն- ժամ շարժումը վերստին ստարթիւն և քըր- տինք կ'արգարտէ, որով ջերմութեան նուա- զում տեղի չունենար: Այս պատճառաւ որ պարանոսիցի մէջ, մարմնոյն կատարեալ արտաշնչութեան միջոցին, կարելի է պաղ- պաղակնիւր ճաշակել, առանց անպատեհու- թեան:

Ամէն պարագայի մէջ, խոհեմութիւն է սա- կայն զովարար ըմպելեանց յաճարակի գոր- ծածութեան զգուշանալ ամբան տաքերու միջոցին, ոչ թէ միայն անոր համար որ ցըր- տառութեանց կ'ենթարկէ զմեզ, այլ մա- նուանց թէ կը տկարացնէ. զի պաղ ջրոյ ներմուծումն, ինչպէս ըսինք ի վերև, մեծա- քանակ ջերմութիւնը մարմնէն զուր կը հանէ, այլ մարմնոյ ջերմութիւնը նուազեցնելն՝ զայն տկարացնել է, խմուած իւրաքանչիւր գաւա- լին ուստի գրտառուութիւնը կը ներկայացնէ, զոր կամովին կը կորտանանք: Ի մի բան, չափաւոր լսելը կը տկարացնէ:

Տկար կազմութեան մը ենթակայ է վայրկի- նական հիւանդութեան, և այսպէս երբ չա- փազանց լսելնք, ամբան եղանակին ճարա- կող ապականիչ հիւանդութիւնը միշտ կը սպառնան մեզ:

Բայց աստի, շատ լսելը ծարաւն չյա- զեցնել, և ո՞վ չէ փորձած թէ որչափ լսելնք, նոյնչափ աւելի ծարաւ կը զգամք: Սորա պատճառը շատ պարզ է. ծարաւը գլխաւոր- արար արեան ջրային մասին զգալի նուա- զումն յառաջ կուգայ. արեան ալ պէտք է որ իւր բաժինն ունենայ: Արդ, սաստիկ տաքերու միջոցին քրտնելով աւելի կորտաւ կ'ունենանք քան զոր չեմ կրնար պարմանել ներմուծեալ հեղուկներով. մէկ ժամու մէջ մինչև երկու երեք լիտր քրտնել կրնանք կորսնցնել: Ստամբուր չէ կարող գիրու- թեամբ տանիլ հասարակ ըմպելիք, և փաստը՝ շահէն աւելի մեծ լինելով, ամէն ան- գամուն այնքան կ'առաւելու որքան համե- մատաբար պաղ լինի լսելու ջուրն և այսու՝ աւելի առատաբար քրտնել արտադրէ: Դիւ- րմունքի է որեւէ թէ արեան մէջ գանտած հեղուկին քանակութիւնը միշտ նուազման վրայ լինելով, ծարաւն ալ համեմատաբար կ'աւելնայ: Ահա այսու կը բացատրուի թէ ինչու համար այնքան աւելի կը ծարաւինք որքան շատ լսելնք, և եթէ ինչ պատճառաւ պաղապակներն և զովարար ըմպելիքները վայրկեանական կերպիւ ծարաւն յագեցնելէ յետոյ առաւել ևս կը զգոնն զայն:

Վերոյիշեալ բացատրութիւնը կը ցուցնեն նաև թէ ինչ դրութեամբ հարկ է լսել պա- տուքն հարկանելու համար. յիշուի քրտնե- լէ զգուշանալով պէտք է լսել, շահիլ առանց կորտանելու: Սորա միջոցն ալ բացայայտ է. հարկ է սպասել որ մարմնն այլ ևս ար- տաշնչութեան գաղբի, որպէս զի ամենափոքր զրգումը մը քրտնելը չհասնի և այսու ար- եան հարկաւոր հեղուկը խոյս չտայ. հարկ է նաև շատ պաղ լսել, որպէս արեան աղ- ցեցութեամբ՝ ջրային արտազրութիւնը չ'ա- րագանան. վերջապէս հարկ է հաստատուն բան մ'ուսել փոքր ինչ, ցրտոյն զրգումը ստամբոսին ներքնամակին վրայ մեղմացը- նելու և այսպէս արտաշնչութիւնն ևս նուա- զեցնելու համար:

Տաք երկրաց մէջ, յաճախ եղեգան ցօ- ղունի կամ յարդի շիւղերու միջոցաւ կը խը- մեն. անտի հեղուկը նրբութիւն կը հոսի մեղ- մերէն առանց արեան գեղի մորթն մղելու, և այսպէս լաւագոյն կերպիւ ծաղաւ կը յա- գնուի: Աւելորդ չէ յանձնարարել թէ պէտք է փոքրիկ ունկելով լսել, փոխանակ մեծա- քանակ պաղ ջուր յանկարծակի ստամբոսը լիցնելու:

Ի մի բան, ծարաւն անցնելու համար պէտք է զգուշանալ խիստ պաղ ըմպելիքներէ, յարմար և ըստ կարելոյն քիչ լսել. քրտը- նած լսելէ վերջ՝ զգուշանալ օգային հոսան- քէ և անշարժ կենալէ: Եթէ ծարաւն անյա-

գելի լինի, կարելի է պաղակն նուազեցնել լորձունքն աւելցնելով. և առ այս կը բաւէ թթուային շաքար մը ծծել կամ կարծր մար- մին մը, օրինակի համար գալլախաղ մը պը- տոցնել բերին մէջ:

Քայլելու, երկար շրջագոյնութեանց ժա- մանակ, խմել յառաջ պէտք է ըստորը ժամ մը սպասել, որպէս զի յոգնութեան յառաջ եկած արտաշնչութիւնը բաւական նուազի. խմելէ վերջ ըստորը մ'ես կենալ վերստին քայլել սկսելէ յառաջ:

Այսպէս կարելի է ծարաւն յագեցնելու անվտանգ, առանց մարմնոյ ուժերն սպառելու: Այլը լոյս կանրածախօր լիսօնա- քաճի Վարդանիւն . . . . . Բ.

ԱՂՔԱՏԱՆՈՒՄ ԲՆԿԵՐՈՒԹԻՒՆ Գ Ա Ն Ի Բ Է Ի

Արքատախտիւմ բնկերութեան Ընդհ. Ժո- ղովը պիտի գումարուի յառաջիկայ կիրա- կէ 2 Յունիս 1901. կէս օրէն յետոյ, ժա- մը 2ին, Ազգային մանկապարտէզի մէջ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- 1. — Միամեայ տեղեկագիր և հաշուե- տուութիւն Գործ. Ժողովոյ:
2. — Ընտրութիւն Գործ. Ժողովոյ:
Դիւանս պարտք կ'զգայ յիշեցնել բոլոր Պատ. անգամայն թէ կանոնագրի Յրդ. յօդ- ուածի համաձայն սոյն նստին մէջ տրուե- լիք որոշմունք վաւերական պիտի ըլլան եթէ ներկայից թիւն 12էն պակաս չըլլայ և կը խնդրէ իրենցմէ որ փութան ներկայ ըլլալ սոյն նստին և կատարել իրենց բնկերա- կան պարտականութիւնն:
Ի գիմաց Ընդհ. Ժողովոյ Արքատախ- տիւմ բնկերութեան:
Ատենադպիր Բ. Ասենապետ
Հ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Լ. ԿԻՄԻՇԵՍՆ
29 Մայիս 1901 Գահիրէ:

ԲԱՆԱԲԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱՍՏԱՆ. — Մայիս 25—29 քաշ- ուած հեռագիրներու համաձայն Պօք- սէրները վերստին սկսեալ են հաւաքուիլ օտար զորագուհի չի գոտուած գա- տուանելու մէջ: Կատարի սպայբար մը տեղի ունեցել է Պօքսէրներու և Չի- նացի կաթողիկոսներու միջև: 4,000է աւելի ապստամբներ զէպ ի Գիւհէի վրայ խոյսած են Սուկու մը ընդհա- նուր է: Եւրոպական 3,000 ուրիշ ա- պստամբներ պիտի մամուսիլին այս ու- պստամբական շարժումին:

Առկէյ ասալ ծանուցած էինք Նոր-Օրի մէջ թէ Տէրութեանց Չի- նաստանի ներկայացուցիչները Չինա- կան խնդրոյն վերջ մը տուլու համար որոշած էին 60,000,000 անգղ. ոսկոյ տուրանք մը պահանջել Չինաստանէն: Արդարեւ Փէրիկէն Մայիս 29ին քաշ- ուած հեռագրի մը նայելով՝ Չինաս- տան արշաւանապէս ծանուցել է Օտար գեղացիներուն թէ՛ պատուար է վճա- րել պահանջուած տուրանքը տարուէ տարի, այն պայմանաւ որ 1/10-է տոկոսը վանց առնուի:

ԹՐԱՆՍՍԻԱ. — 28 Մայիսին քաշ- ուած հեռագրի մը նայելով, 34 Պօքս-



ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՀՈՄՍՐ

Այն հրատարակչու կը նկատենք յառա-  
կօրէն շնորհիւ, այս նոր հրատարակ-  
չութեան սկիզբը, անոր հաւաքական  
և անշտհատեմտի ձեռնարկի հանգա-  
տանքը:

Արտասահմանի զանազան կեդ-  
րաններու մէջ հաստատուած Հայեր,  
գաղափարական սերտ եղբայրու-  
թեամբ մը միացած, ԺՈՂՈՎՈՐԴԻՆ  
ՀՈՄՍՐը կը հիմնեն, հանրային  
գործունէութեան գիտակից ու հզօր  
խանգով մը, և որիչ բան չեն փըն-  
տաւեր, այս ազատ օսկանին հիմնար-  
կամին մէջ, եթէ ոչ պարտականու-  
թեան խորունկ զգացումի մը գո-  
հացումը:

ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՀՈՄՍՐԻՆ հիմ-  
նադիրները անձնական զոհողութիւն-  
ներ քրոմ են անոր կանոնադր հրա-  
տարակութիւնը ապահովելու համար:

ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՀՈՄՍՐԻ Խը-  
րատարական մարմինը լուրջ ու խզա-  
միտ նկատողութեան պիտի առնէ իրեն  
եկամ ո եւ թելադրութիւն կամ գի-  
տողութիւն, ազգային ընդհանուր կամ  
մասնաւոր խնդիրներու վրայ, ժող-  
վուրդին ո՛ր դասէն ալ որ ուղղուի  
ան իրեն:

ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՀՈՄՍՐԸ ա-  
ռաւելութիւնը պիտի ունենայ մեր  
արդի գործներէն լաւագոյններուն  
սեռակամ աշխատակցութիւնը վայել-  
ելու:

Թերթին ներքին վարչութիւնը  
յանձնուած է մեր Բարեգի երկու  
ընկերներուն:

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ

1901 Յունիս 1-ից Պարիզում կա-  
կի լոյս տեսնել հայերէն լեզուով  
« ԺԱՄԱՆԱԿ »

Հանդէս գրական, հասարակական,  
գեղարուեստական, քաղաքական:

ԺԱՄԱՆԱԿը կունենայ այն բոլոր  
բաժինները, ինչ որ ունին եւրոպա-  
կան գրական հանդէսները. առանձ-  
նապէս ուշադրութիւն դարձնելով գիտ-  
նական ու գեղարուեստական բաժին-  
ների վրայ:

ԺԱՄԱՆԱԿին աշխատակցելու պատ-  
կաստականութիւն են յայտնել բող-  
մաթիւ հայ և եւրոպացի յայտնի հե-  
ղինակներ, որոնց երկերը արդէն ստա-  
ցել է խմբագրութիւնը:

ԺԱՄԱՆԱԿը բաղկացած կը լինի 3  
տպագրական թերթերից (80 երես  
La Revue et Revue des Revues  
հանդիսի զիջումով:

ԺԱՄԱՆԱԿի առաջին համարը լոյս  
կը տեսնի ճիշդ 1901 թուականի յու-  
լիս 1ին և ներկայ թուականին կը  
հրատարակուի երկու ամիսը մի ան-  
գամ, այն է յունիս 1. սեպտեմբեր 1  
ու նոյեմբեր 1. Իսկ սկսած 1902  
թուականի Յունուար 1-ից կը հրա-  
տարակուի իւրաքայիւր ամիս:

Հարկ եղած դէպքերում, ԺԱՄԱ-  
ՆԱԿը կը լինի պատկերազարդ և կը  
տպագրէ եւրոպական երկերի բնա-  
գիրը եւրոպական լեզուներով, հայե-  
րէն թարգմանութեան հետ միասին:

Բացուած է բաժանորդագրութիւն  
1901 և 1902 թուականներէ: Բաժա-  
նորդագրութեան սրտանմանքը պար-  
զուած են հետեւեալ աղիւսակի մէջ  
Բաժանորդագրութիւն 1901 քուս-  
կանի (կիսամեակ)

Ռուսաստան . . . . . 3 ուրբի.  
Անգղիա . . . . . 7 շիլին,

Ֆրանսան, Պուլիարիա . Պարսկաս-  
տան, Ռումանիա. Թիւրքիա, Եգիպ-  
տոս. Յունաստան, Աւստրիա. 8 ֆրնք.

Ամերիկա . . . . . 1 դօլար (սակի)  
Բաժանորդագրութիւն 1902 քուս-  
կանի (12 գիրք)

Ռուսաստան . . . . . 10 ուրբի  
Անգղիա . . . . . 1 ֆնա. ստերլին  
Ֆրանսա, Բուլղարիա, Պարսկաս-  
տան, Ռումանիա, Թիւրքիա, Եգիպ-  
տոս, Յունաստան, Աւստրիա. 25 ֆրնք.

Բաժանորդագրութիւն 1901 և 1902  
քուսկանների համար (15 գիրք)

Ռուսիա . . . . . 12 ուրբի  
Անգղիա . 1 ֆնա. ստերլ. և 7 ք շիլ.  
Ֆրանսա, Բուլղարիա, Պարսկաս-  
տան, Ռումանիա, Թիւրքիա, Եգիպ-  
տոս, Յունաստան, Աւստրիա, 30 ֆրնք.

Ամերիկա . . . . . 6 դօլար:  
Ամենայն տեղերից գիմել հետեւեալ  
հասցէով.

Paris, (France) 64 rue Claude-  
Bernard Directeur de la Revue  
« Jamanak » S. Hakhoumian

Ա Ձ Դ

Շատերու կողմէ յայտնուած փա-  
վաքի մը գոհացում տարու և մեր  
թերթերը պիտի զիջու իրեն մը ըն-  
ծայելու նպատակով, ոչսուհետեւ մեր  
թերթը հասով պիտի ծախուի Շա-  
րա Ապտ-էլ-Ազիզի սկիզբը Պ. ԿԱՐՍ-  
ՊԵՏ ԵՐԶԵԿԱՅԵԱՆԻ խանութը:

ՏՈՒՌԱ ՄԻԻԶԻԿԱՆ

(ԻՍՒԱՄԱԿԱՆ ՕՐԷՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ)

Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն հրատարակութեան առաջին  
մասը՝ Եգիպտական արդարութեան  
Գործոց Նախարարութեան կողմէն  
նրախան վարձատրութեամբ գնա-  
ւորուած է:

հատուած և Եգիպտոսի գաղափարներ-  
ուն մէջ զարծածութիւնը պաշտօ-  
նապէս ընդունուած է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընդհ. տեսութիւն ժառանգական  
օրինաց և ժառանգութեան իրաւունց  
ժողովան վրայ. — Ժառանգութեան  
պայմանները. — Ազգականութիւն և  
աստիճանները. — Գերութիւն և ժա-  
ռանգութեան հետ ունեցած կապերը. —  
Ժառանգութեան զրկող պատճառներ. —  
Մարգասպաններու ժառանգութիւնը.  
— Տիէթ (մարդու արեան գինը). —  
Ժառանգութեան մը պարտքը և պա-  
հանջը. — Ժառանգորդներու կարգը  
իրենց աստիճաններով:

Ժառանգութեան օրէնքին տրամա-  
դրութիւնները ուրոյն ուրոյն մեկնը-  
ւած են: Գրքային վերջը գրուած է  
ցանկ մը որ մատչելի եղանակաւ կը  
նշանակէ թէ ժառանգութեան օրինա-  
կան բաժինները ինչպէս կը բաժնը-  
ւին:

Երկրորդ մասը մօտ ժամանակէ  
լոյս պիտի տեսնէ՝ ինամակալութեան  
կտակի, Սպանութեան, Արեան Գնոյ  
վրայ ընդարձակ ծանօթութիւններով:  
Գին 10 ԴԱՀ. ՈՂԶ

ՊԱՆԳ ԼԻՍՆԵԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրաժանութ գրամատուցը,  
այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի  
զարծակաւ ալ, Տ. ՄԻԿՐՈՒԶ Սօսօյեան,  
որ իւր հրատարակային ցոյց տուած  
պարկեշտ զարծունէութեամբ ամե-  
նուս վստահութիւնը կը վայելէ:  
Սոյն զարծակալութիւնը, 11 Սիպտ.  
թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղա-  
քապետութեան պաշտօնապէս վա-  
ւերացուած փոխանորդարդի համա-  
ձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնեզի  
միջոցաւ ամեն տեսակ գրամական և

Գոհարի Ֆոնսիէի, վիլ սը Բարիի և  
Գաղղիական ամէն արժեթուղթերու  
զործողութիւններ, գանձումներ, Ամսա-  
կան ընչին գումարի մը ինսպորտ-  
թեամբ ձեռք կը բերուի քիչ տոնէն,  
պահեստի բաժնեկալ մը, վիճակա-  
հանութեամբ երաշխաւորուած:

Փախարայները հաճին գիմել նիւ-  
պտի վրայ փոստարան Բարթարիի  
գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ զըր-  
կել հետեւեալ հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ  
Ի ԳԱՀԻՐԷ

ՊԵԼԱՆԱ-ՅԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ՍՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ  
ԱՐԱՅ ԵՒ ՏԻԿԱՆՏ  
ԵՒ ՁԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԳՊՈՑ

Ապսիթի մեծ պողոտային վրայ Տայիւայի  
Ասմիթի գիւմարը, ճախիկն ելեկտրական  
գործիներու վաճառատուներ:

Վերջերս Ամերիկայէն հօս եկծա  
հաստատուած ըլլալով կը յայտարա-  
րենք արդոյ հասարակութեան թէ՛  
պատրաստ ենք գոհ սցենը մեզ գիմող  
Պասա. յաճախորդները, գործի մաք-  
րութեան, գիւմարու չափաւորութեան  
և ճշգրտապէս թեան կողմէն:

Մեր գործատեւ պիտի մէջ կ'աւան-  
դուին նաև ձեւագիտութեան դասեր  
ամերիկեան ամենալեզրին կատարե-  
լագործուած մէթոտով,  
Մանրամասնութեանց համար գիմել  
մեր գործատեւ պիտի:

Le Gérant J. MUNIER

Տպա. « Միուրիւն ». — Թ. Ս. Փափագեանի

Տ Պ Ա Ր Ա Ն  
Ի ԳԱՀԻՐԷ  
ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՍԱՑ  
ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ  
ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ  
Սոյն նորակալով տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատա-  
րակութիւններ, պարբերական թերթեր, յարտարարութիւններ, շրջաբերականներ, այցեւորներ, մահազգեր,  
հարստանաց հրաւիրագրեր, կանոնադրներ, նամակագրութիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն:  
Յանձնարարութիւններ կը կատարուին փոքրով, ամեկայեկ խնամով և ճարտարապետութեամբ:  
ՉԱՓԱԿՈՐ ԳԻՆԵՐՈՎ